

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՆԴԵՊ

(ՄԱՀԻԱՆ 15ԱՄԵՍԿԻՆ ԱՌԹԻԻ)

Համաշխարհային պատերազմը ուժղնօրէն ցնցեց եւ Յ. Թումանյանին։ Նա մասնակցում է Ազգ. Բիւրոյին։ Ռազմաչունչ յօդածներ է գրում «Հորիզոն»-ում։ Անտահման հաւատ ունի դէպի Դաշնակիցների յաղթանակը։ Հաւատ, յատկապէս, դէպի Ռուսաստանը։

« Ազգային պատերազմն ու իրենց զիւցազուհները » յօդածով — « Հորիզոն », 1914 թ., 4 Սեպտ. — գրում է « Հս չտեսնած » պատերազմի մասին. —

« Որովհետեւ ամէն մի ազգի ուժն ու ոգին մարմնացած է իր ազգային էպոսի մէջ, ամենայն համարձակութեամբ կորոզ ենք էսպէս ասել, թէ ազգերի զիւցազուհները — սերբիական Մարկոն, գերմանական Ջիզֆրիդը, ֆրանսիական Ռուանդը, անգլիական Բէնփոլֆը ու ռուսական Մուրոմցի Իլիանեն առասպելների աշխարհից դուրս եկել մեր առաջ, ու մենք հանդիսատես ենք էս հսկաների կրուկին » :

Այդ հսկաները՝ « Ի՞նչ խօսք, որ ցաք ու ցրիւ են անելու գերմանական Ջիզֆրիդի տիրած ինչերն ու տիրապետելու տենչերը, եւ անգլիական Բէնփոլֆը շատ դանձեր է տանելու իր կղզին։ Ի՞նչ կասկած, որ էս հսկաների դարկերի տակ մասնատուելու են եւ Ներքսայի Թիւրքիան՝ Աւստրո — Հունգարիան, եւ Ասիայի Թիւրքիան, որոնք նոյն իսկ էս զիւցազուհների շարքում չունեն իրենց ներկայացուցիչը, եւ շատ բարիքների ու ազատութիւնների հետ միասին, որ հետեւելու են մեծ պատերազմին, վերջնականապէս պէտք է վճուի եւ Տաճկահայկական հարցը, կամ, եթէ կուզէք, արդէն վճուած է։ Զէ՞ որ Մուրոմցի հսկայի «ախպերացունների» թուումն է եւ մեր Սասունցի Դաւիթը, եթէ միայն Մարմեղիքի փորած հորից լուս աշխարհ է դուրս եկել » :

Իր ընտրութեամբ Թումանյանը լաւատես էր. նա համոզւած էր, որ պատերազմի վերջը լաւ էր լինելու. —

« Ժողովուրդների էպոսներն առ հասարակ վերջանում են խաղաղութեան սրբազան խօսքով։ Եւ ճշմարիտ, որ էս պատերազմից յե-

առյ չտեսնած թափով ու ծաւալով է բարձրանալու համաշխարհա-
յին խաղաղութեան հարցը, այլ եւ նրա հետ միասին ուրիշ մեծ
հարց՝ քաղաքակիրթ մարդու հարցը. կամ, աւելի ճիշտ, մարդու
հարցը, որ իր դադանութիւններով յարուցանում է լուսաւոր Գեր-
մանացին ու դարձնում է լուրջ խորհրդածութեան նիւթ աշխարհի
բոլոր աղգերի եւ բոլոր մտածողների համար » :

Մարդկային « դադանութիւնները » շատ էին խոսովել Յ. Թու-
մանեանի միտքը : Նա բազմաթիւ անգամներ անդրադառնում է այդ
խնդրին : Ի միջի այլոց (« Հորիզոն », 18 Սեպտ., 1915), ի տես դեր-
մանական « դադանութիւնների », նա ներողութիւն է խնդրում քրդ-
դերից եւ թիւրքերից .—

« Ներեցէ՛ք մեզ, ո՛վ քրդեր, ո՛վ թիւրքեր, որ 1878 թւականին
մենք դնացինք Բերլին ու զանդատեցինք ձեր կատարած կողո-
ւղուտների, բռնաբարումների, սպանութիւնների, հրդեհահերի եւ ա-
ւերումների գէժ՝ ձեզ անւանելով բարբարոսներ ու զազաններ, իսկ
նրանց մարդասէր դատաւորներ » :

Իսկական « բարբարոսներն ու զազանները », ըստ Թումանե-
անի, գերմանացիներն են, որ Լուվէնի գրադարանը հրդեհեցին, որ
Ռէյքսի տաճարը կործանեցին, որ մարդկանց « աչքերը հանոտում,
լեզուները կարատում » են :

Թումանեանը ներողութիւն է խնդրում նաեւ զազաններից եւ
աւելի իմաստուն ու տեղին է գտնում « զնալ զանդատել նոյն իսկ
էն շներին, որ անընդունակ են էս տեսակ արարքների » :

« Աւա՛ղ, կարծես թէ դուր են ապրում ու անցնում մեծ փիլի-
սոփաները, մեծ գիտնականներն ու մեծ բանաստեղծները. աղգերի
համար մեծ մասամբ նրանք հանդիսանում են լոկ որպէս չքեղ զար-
դարանքներ » :

1915 թ. աշնանը լոյս տեսաւ Գիւտ քահ. Աղանեանի « Դիւան Հա-
յոց Պատմութեան » ԺԳ հատորը՝ տաճկահայոց հարստահարութիւն-
ների մասին : Յ. Թումանեանը « Հորիզոն »-ում (7 Նոյ.) այդ առթիւ
դրեց մի յօդւած, ուր, ի միջի այլոց, ասում էր. — « Դիւանի էս
գիրքը՝ յուսահատական գիմումներով, բարձրագոյն բողոքով ու ըմ-
բոստ ծրագիրներով՝ ցոյց է տալիս, թէ սխալ են բոլոր էն մարդիկ,
որոնք կարծում են, թէ էս ամենը կարող էին անցնել առանց ծայրա-
յեղ դժգոհութեան բռնկումի, առանց յեղափոխութեան : Այլ եւ սխալ
են նրանք, որոնք կարծում են, թէ յեղափոխութիւնը դրսեցիները —
ոռութիւններն են սկսել Տաճկաստանում » :

Տաճկահայերի ազատագրութիւնը Յ. Թումանյանը սպասում էր Ռուսաստանից, ուստի ղէնքի յաջողութիւնից, այդ պատճառով նա ուրախութեամբ դիմաւորեց ուստի — թրքական պատերազմը, որ նրա համար « սրբազան պատերազմ » էր, ինչպէս եւ նախորդ երկու պատերազմները :

« Առաջինը (1827 - 28-ին) — գրում է նա — հայ ժողովրդի մի մասն ազատեց մի անյոյս դժոխքից եւ ազդովին ապրելու յոյս ներշնչեց : Երկրորդը (1877 - 78) դրեց ինքնավար Հայաստանի հարցը : Երրորդը բերելու է թիւրքահայերին ազգային ինքնավար կեանք :

« Առաջին պատերազմը մեզ տեց Խ. Արովեան — « Վէրք Հայաստանի » : Երկրորդ պատերազմը տեց Բաֆֆի, Պատկանեան եւ ազատագրական դրականութիւն : Երրորդը տալու է ընդհանուր ազդային ազատ դրականութիւն :

« Առաջին պատերազմի ժողովրդական հերոսը Աղասին էր, պատահական, մենակ ու խեղճ : Երկրորդինը Վարդանն էր, Խենթը, թէեւ դարձեալ ստեղծովի, բայց իրական հիմք ունէր կեանքում, մենակ չէր, եւ նրա կողքին նկատուում են մի շարք գիտակից հերոսներ — Դուդուկչեանի, Ֆահրատի, Սահրատի, Ասլանի, Կարոյի եւ այլոց դէմքերը, որոնք արդէն չարժուում էին հայկական կեանքում : Իսկ երրորդ պատերազմի հայ ժողովրդական հերոսն — Անդրանիկն՝ արդէն իրական անձնաւորութիւն է, շատ ընկերներով, ազատութեան դադափարն ընդհանուր ու շարժումը համազգային :

« Եւ էսպէս, էս երրորդ պատերազմը անանդական խորհրդաւոր երրորդ զարկն է : Երրորդ զարկն է վճռում խնդիրը : Երրորդ զարկով հիւսիսի հսկան, մեծ Ռուսաստանը վճռում է հայ ազգի հին, արիւնոտ խնդիրը, ապահովում է նրա ապագան ու առաջնորդում նրան դէպի ազատ ազգերի եղբայրութիւնը » : « Հորիզոն », 31 Հոկտ. 1914) :

Նոյն խնդրին Թումանյանը յաճախ անդրադարձել է եւ ոտանաւորներով : Ահա դրանցից մէկը. —

ՎԵՐՋԻՆ ՏԱԳՆԱՊԸ

Վեր է կացել հին վիշապը նոր թափով,
Վեր է կացել վերջին մոլի տաղնապով,
Արիւնդուշտ, ոճիրներով ահաւոր
Մահ է շնչում լեռներն ի վեր ալեւոր :

Ու նրա դէմ ելած անդուտը, անսահման,
Յորձանք տալով ամէն կողմից՝ հայութեան
Հին-հին յոյսերն ու յուզմունքը դարաւոր
Ծառս են լինում լեռներն ի վեր ալեւոր:

Ծառս են լինում քաջ խմբերով անձնէր,
Ծառս են լինում տանջւողներով կիսամեռ,
Ծառս են լինում անընկճելի ու արի
Մինչեւ ճերմակ գլուխները լեռների:

Ու լեռները պառաւ մօր պէս վերստին
Արնոտում են գլուխները իրենց հին,
Միշտ խորհելով ամպերի տակ սեւակնած,
Որ հէնց իրենց հառաչանքն են կուտակւած:

Ու ամպերում, բարձրը ուսից Մասիսի
Սլանում է մեծ արծիւը հիւսիսի
Ծիտակ դէպի բարձունքները հայկական՝
Իր յետեւից հայի բախտն ու ապագան:

Բագու, 8 Նոյեմբ.

«Արեւ», 1914 թ. Նոյեմբ. 9

